

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Պարույր Սևակի մասին «Գարունի» 1988 թ. ապրիլ-մայիս համարներում հրատարակված «Ուշացած խոստովանություն» վերնագրով հուլիսի հեղինակ վաչե Սաֆարյանն ի թիվս այլ բացահայտ աղավաղումների ու կեղծիքների թույլ է տվել նաև զրպարտչական հայտարարություններ մեծավաստակ հայագետ, Մաշտոցի անվան Մատենադարանի նախկին տնօրեն, ակադեմիկոս Լեվոն Խաչիկյանի և ուրիշների հասցեին:

Հայտնի է, որ 1967 թ. Սայաթ-Նովային նվիրված իր դիսերտացիոն աշխատությունը Պարույր Սևակը պաշտպանեց և արժանացավ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի, շնայած այն ներկայացրել էր որպես թեկնածուական դիսերտացիա: Մեծ չէ այդպիսի դիսերտացիաների քանակը և միայն բացառիկ դեպքերում է, որ գիտական խորհուրդները հնարավորություն են ունենում ոչ թեկնածու դիսերտանտին միանգամից շնորհել դոկտորի աստիճան:

Այդ իրողությունը ոգևորել և շատ ուրախացրել էր Պարույրին: Թվում էր թե հուշագրողը երախտագիտության խոսք պետք է ուղղեր Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի անդամներին և դիսերտացիան գրախոսող կազմակերպությանը՝ Մատենադարանին, որոնք Պարույր Սևակի գիտական աշխատությունը բարձր գնահատեցին և գտան արժանի դոկտորական աստիճանի համար: Բայց Վ. Սաֆարյանն անպայման ուզում է «բացահայտել» մեծ բանաստեղծին ճշելու, հետապնդելու, նրա առջև արհեստական արգելքներ ստեղծելու փաստեր ու եղելություններ:

Պարույրի դիսերտացիայի հաստատման ձգձգվելը կապված էր ավելի բարձր աստիճան հայցելու խնդրի հետ: Հանրահայտ է, որ Բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովը՝ ՎԱԿ-ը դժվարությամբ է ընդունում նման բնույթի պաշտպանություններ և ավելի է դանդաղեցնում առանց այդ էլ հաստատման ոչ արագ ընթացքը: Այստեղ մեղավոր փնտրելը Վ. Սաֆարյանի կողմից շունի որևէ հիմք: Առավել ևս, որ նրան անձանոթ չէ ՎԱԿ-ի այսօրինակ գործելակերպը: Բայց Վ. Սաֆարյանը հալածանք ու հալածողներ է փնտրում և դրանցից մեկն էլ նրա կարծիքով եղել է հանգուցյալ ակադեմիկոս Լ. Խաչիկյանը: Ըստ Վ. Սաֆարյանի հուշերի Լ. Խաչիկյանն իբր ձգտել է տապալել Պարույր Սևակի դիսերտացիան:

Մենք ներկա ենք եղել Սևակի դիսերտացիայի քննարկմանը Մատենադարանում և հայտարարում ենք, որ Վ. Սաֆարյանը զրպարտում է: Պարույր Սևակի նկատմամբ Լ. Խաչիկյանը բացառիկ հարգանք ու սեր էր տածում, նա բարձր կարծիք ուներ նաև նրա գիտական կարողությունների մասին, ուստի դիսերտացիայի քննարկումը Մատենադարանում անցկացվեց անկանխակալ ն միանգամայն բարյացակամ մթնոլորտում: Բանաստեղծը մասնակցեց քննարկմանը և շատ գոհ մնաց արդյունքներից:

Պահպանվել է դիսերտացիայի քննարկման՝ Մատենադարանի միջնադարյան բնագրերի և դիվանական վավերագրերի ուսումնասիրման ու հրատարակման սեկտորի 1967 թ. հունվարի 9-ի նիստի № 1 արձանագրությունը: Քննարկման ժամանակ ելույթ են ունեցել ոչ թե երկու, ինչպես «հիշում է» Վ. Սաֆարյանը, այլ յոթ հոգի՝ Լ. Խաչիկյանը, Ա. Մնացականյանը, Հ. Փափազյանը, Բ. Զուգասպյանը, Ա. Մարտիրոսյանը և ուրիշներ: Ընդունվել է որոշում, ըստ որի Պարույր Սևակի մեծագրությունը համարվում է «կարևոր ներդրում հայ գրականագիտության մեջ... աշխատության մեջ բացահայտված

են Հեղինակի բանասիրական աշխատանք կատարելու հմտությունն ու ակնհայտ կարողությունները... (հեղինակը) հանդես է գալիս հասունացած, բազմակողմանի ու խորը գիտելիքներով օժտված գրականագետ: Սայթ-նովայի տագերբ քննված են ամենայն մանրամասնությամբ՝ գրականագիտական տարբեր մոտեցումներով ու նպատակներով, գեղագիտական նուրբ դիտողականությամբ ու ճաշակով, գիտական խորությամբ ու անաչառությամբ...» և այլն: Եղրակացությունը հետևյալն է՝ «Արդի գիտության ամենախիստ պահանջները բավարարող այս մեծագրությունը... ոչ միայն լիովին բավարարում է, այլև մեծ չափով գերազանցում է թեկնածուական դիսերտացիաներին ներկայացվող պահանջները և նրա հեղինակն արժանի է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին»:

Այսպիսին է եղել դիսերտացիայի քննարկման կապակցությամբ ընդունված որոշումը Վ. Սաֆարյանի կեղծիքն ակնհայտ է: Լ. Խաչիկյանը իսկական գիտության մարդ էր՝ սկզբունքային, բարեխիղճ, ազնիվ, միաժամանակ և խստապահանջ: Նա գիտեր հիմնավորել ու պաշտպանել իր տեսակետները: Եթե նա համոզված լիներ, որ այդ դիսերտացիան չի կարելի ներկայացնել որպես դոկտորական, ապա նա կպաշտպաներ իր տեսակետը, ոչ թե առաջինը դրակյան ելույթ կունենար և իր ձեռքով կխմբագրեր ու կհաստատեր վերը նշված կարծիքը:

Հերյուրանք է նաև հուշագրողի հայտարարությունն այն մասին, թե յ՛լ. Խաչիկյանը հետագայում աշխատեց, որ Պ. Սեակր ՀեՍՀ ԳԱ թղթակից անդամ չընտրվի»: Այս սուտը Վ. Սաֆարյանը հնարել է ոչ միայն Պ. Սեակի պոեզիայի, նրա անկրկնելի անձնավորության երկրպագուներին թյուրիմացության մեջ գցելու, այլև մեկ այլ հմայիչ ու վաստակաշատ անձնավորության վարկաբեկելու նպատակով: Ոչնչով չհիմնավորված այս նորահնար բամբասանքի կապակցությամբ մենք կարող ենք վկայել, որ Լ. Խաչիկյանը ոչ միայն նման «աշխատանք» չի տարել, այլև հավանություն տալով Պ. Սեակի թղթակից անդամ ընտրվելու առաջարկությանը, միաժամանակ գտնում էր, որ նա արժանի է դառնալու ակադեմիայի իսկական անդամ: Այսպիսին էր նրա վերաբերմունքը Պարույր Սեակի նկատմամբ:

Իր հուշագրության տողատակի ծանոթության մեջ Վ. Սաֆարյանը Զիա Իունիթովի «Աղբբեշանը VII—IX դարերում» գրքի առթիվ 1967 թ. «Պատմա-բանասիրական հանդեսում» Աս. Մնացականյանի ու Պարույր Սեակի տպագրած հոդվածի կապակցությամբ գրում է, թե «Ժանր ժամանակների դժվարությունների ու ակադեմիկոսների (Լ. Խաչիկյան, Մ. Ներսիսյան) արգելքներից և մեկ տարվա նյարդային տանջանքներից հետո հոդվածից լույս տեսավ մի երրորդ մասը» (էջ 47):

Այստեղ ևս ակնհայտ է ընթերցողներին խաբելու և թյուրիմացության մեջ գցելու Վ. Սաֆարյանի անազնիվ ձգտումը: Ըշմարտությունն այն է, որ Մնացականյանի ու Սեակի այդ հոդվածը գրվել է «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանի խնդրանքով: Մենք գիտենք, և դա հայտնի է շատերին, որ Մ. Ներսիսյանը, Լ. Խաչիկյանը և խմբագրական կոլեգիայի մյուս անդամները (ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյան, Արամ Ղանալանյան, Բաբկեն Առաքելյան և ուրիշներ) սրտացավ ձեռով և հետևողականորեն հետամուտ են եղել հոդվածի լույս ընծայմանը: Այն հանգամանորեն քննարկվել է հանդեսի խմբակուղի 1967 թ. հունիսի 17-ին կայացած նիստում, որին մասնակցել են և՛ Սեակը, և՛ Մնացականյանը: Ռուսերեն լեզվով հրատարակված այդ հոդված-գրախոսականը շերտ արձագանք գտավ գիտական շրջաններում:

Նկատենք, որ Մ. Ներսիսյանի խմբագրությամբ լույս տեսնող «Պատմա-բանասիրական հանդեսում» հրատարակվել է Պ. Սեակի «Ծրբ է ծնվել Սայթ-Նովայ» հոդվածը (1966 թ. № 2), ինչպես նաև անվանի բանասեր-հայագետ Աս. Մնացականյանի մի շարք հոդվածները: Մնացականյանի «Աղվառնից աշխարհի գրականության հարցերի շուրջը» արժեքավոր աշխատությունը

հայերեն և ռուսերեն լեզուներով լույս տեսավ և հաշիկյանի ջանքերով և այդ ալն ժամանակ, երբ չէր խրախուսվում նման գործերի հրապարակ գալը: Այդ գիրքը ևս նախնական քննարկման ժամանակ արժանացել էր և հաշիկյանի դիտողություններին, մի բան, որ մեծապես շահեկան եղավ գրքի համար: Այս էր պատճառը, որ երախտապարտ հեղինակը գրքի առաջաբանում իր պարտքն է համարել շնորհակալություն հայտնել և հաշիկյանին «սույն մե- նագրության վերաբերյալ արած օգտակար դիտողությունների համար»:

Վ. Սաֆարյանը իր «հուշերում» հիմնադրել, անպատասխանատու և զրպարտիչ հայտարարություններ է անում բազմաթիվ գրողների, գրաբնա- դատների ու գիտնականների մասին, ձգտելով հավատացնել ընթերցողներին, որ իբր Պ. Սևակը շրջապատված է եղել թշնամիներով և որ իբր բանաստեղծի միակ բարեկամն ինքն է եղել: Մի՞թե պարզ չէ, որ «բարեկամի» անվան տակ հանդես եկող Վ. Սաֆարյանը փաստորեն վարկաբեկում է ժողովրդի ու մտա- վորականության լայն խավերի կողմից սիրված ու հարգված մեծ բանաստեղ- ծին: Իհարկե, եղել են մարդիկ, որոնք սուբյեկտիվ, անբարյացակամ վերա- բերմունք են ունեցել Պ. Սևակի նկատմամբ. մեր սերունդը չի մոռացել նրանց անունները: Զարմանալին, սակայն, այն է, որ Սաֆարյանը ինչ-ինչ նկատառումներով լուում է նրանց մասին:

Սաֆարյանի անազնիվ ձգտումը, իհարկե, ունի մի շարք դրդապատ- ճառներ: Դրանցից մեկի մասին մենք կցանկանանք ասել մի քանի խոսք: Բանն այն է, որ տարիներ առաջ Վ. Սաֆարյանը ցանկություն ուներ աշխա- տելու Մատենադարանում և այդ հարցով դիմել էր նրա տնօրեն և հաշիկ- յանին: Վերջինս մերժել էր նրան՝ հավանորեն հաշվի առնելով այն չանա- մանքը, որ Վ. Սաֆարյանն իր հակումներով ու պատրաստությամբ ի վիճա- կի չէր զբաղվելու ձեռագրագիտական աշխատանքով: Կյանքը ցույց տվեց, որ նա չէր սխալվել: Վ. Սաֆարյանն ըստ էության գիտությունից հեռու կանգնած, անպատասխանատու անձնավորություն է և դրա լավագույն ապացույցներից մեկն է նաև նրա գրչի տակից դուրս եկած այս «հուշագրությունը»:

Արևշատյան Ս., Գրիգորյան Վ.,
Զուգասոցյան Բ., Փափազյան Հ.

1988 թ. հոկտեմբեր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Ս. Թ. հունիսի կեսերին Երևանի ռադիոն հաղորդեց հանգուցյալ գրակա- նագետ Ալբերտ Արիստակեսյանի արխիվից հանված մի նյութ, որը վեր- նագրված է՝ «Բմ վերջին հանդիպումը Պարույր Սևակի հետ»: Ռադիոյի աշ- խատակիցների կողմից «Զրույց» անվանված այդ հաղորդման մեջ, հակառակ վերնագրի, խոսվում է այլ հարցի, հիմնականում այն մասին, թե ինչպես, ինչ պարագաներում «Պատմա-բանասիրական հանդեսում» 1967 թ. հրապա- րակվեց պրոֆ. Ասատուր Մնացականյանի ու բանաստեղծ Պարույր Սևակի գրախոսությունը ազգայնամուլ Զիա Բունիաթովի «Ադրբեջանը VII—IX դդ.» հակագիտական գրքի մասին:

Որպեսզի չմեղանչենք ճշմարտության առջև, մենք՝ «Հանդեսի» 1967 թ. խմբագրական կոլեգիայի անդամներս, որ լավ ծանոթ ենք բարձրացված հարցին, անհրաժեշտ ենք համարում հայտնել, որ «Զրույց» կոչված այդ հա- ղորդման մեջ թույլ են տրված փաստերի կոպիտ խեղաթյուրումներ, անհիմն պնդումներ, ու բամբասանքներ:

Հաղորդված նյութում, օրինակ, ասված է, որ իբր «Հանդեսի» խմբագրու- թյան մի շարք անդամներ աշխատել են մերժել այդ գրախոսությունը, բայց չնայած դրան, այն տպագրվել է գլխավորապես իր՝ «Զրույցի» հեղինակի ջան-

րերի շնորհիվ: Այստեղ պարզապես գործ ունենք փաստերի արտառոց աղա-
վաղման հետ: Իրականությունն այն է, որ Մնացականուհի և Սևակի այդ
գրախոսությունը գրվել է «Հանդեսի» գլխավոր խմբագիր, հանրապետության
ակադեմիայի ակադեմիկոս Մ. Ներսիսյանի առաջարկությամբ և տպագրվել է
խմբագրական կոլեգիայի անդամների միաձայն որոշմամբ: Հոդվածի քննար-
կումը ու խմբագրությունը կատարել են մեր անվանի հայագետ-ակադեմիկոս-
ներ Աշոտ Հովհաննիսյանը, Արամ Ղանալանյանը, Լևոն Խաչիկյանը, Բաբկեն
Առաքելյանը, Սուրեն Երեմյանը և մյուսները՝ Սևակի և Մնացականուհի
մասնակցությամբ: Արհեստակեսյանն այստեղ չէր կարող խաղալ և չի խաղա-
ցել որևէ դեր, քանի որ նա խմբագրական կոլեգիայի անդամ չէր (վարում էր
միայն գրական աշխատողի պաշտոն) և մասնագիտորեն անտեղիակ էր քնն-
նարկվող խնդրին (զրադվում էր խորհրդային գրականության հարցերով. իսկ
գրախոսությունը վերաբերում էր Անդրկովկասի միջնադարյան պատմության
պլուրլեմներին):

«Զրույցում» ասված է, որ «Հանդեսի» խմբագրությունը աղավաղել է
յորախոսությունը, որի համար իբր նրա հեղինակները բողոքել են: Սա ևս,
մեկը ասած, ճիշտ չէ: Այդպիսի բողոքներ չեն եղել, քանի որ գրախոսության
խմբագրված տեքստը տպարան է ուղարկվել այն բանից հետո, երբ նրա տակ
ստորագրել են հեղինակները (ավելորդ չէ նշել, որ նյութի վերջնական տեքս-
տը ուսեբեկնի է թարգմանել Սևակի կինը իր՝ բանաստեղծի մասնակցու-
թյամբ): Գրախոսության խմբագրությունը կատարվել է ամենայն բարեխղ-
ճությամբ և գիտական բարձր մակարդակով: Հեղինակների հետ միասին,
նրանց համաձայնությամբ հոդվածում կատարվեցին մի շարք անհրաժեշտ
կրճատումներ ու մասնակի ճշգրտումներ: Ի վերջո տպագրվեց բոլոր առում-
ներով շատ հաջող մի հոդված, ուր բացահայտված է նացիոնալիստ պատմա-
բանի ամբողջ կեղծարարությունը: Դրանում համոզվելու համար հարկավոր
է ծանոթանալ հրապարակված նյութին (տե՛ս ՊԲՀ, 1967 թ. № 1): Բնորոշ
է այն, որ «Զրույցի» հեղինակը ինքն իրեն հակասում է. սկզբում, օրինակ,
նա գրում է, թե նյութը «բզկտվեց» ու «աղավաղվեց», իսկ հետագայում, մո-
ռանալով իր այդ պնդումը, բավականությամբ նշում է, որ «Հանդեսում»
տպագրված հոդվածը մեծ ընդունելություն գտավ: Ո՛ւր է տրամաբանությունը:

Վերջապես մի հանգամանք ևս. մի՞թե Սևակը այն մարդն էր, որ կարող
էր ստորագրել մի հոդված, որի մեջ «բզկտված» ու «աղավաղված» լինեին իր
մտքերը: Ո՛ւմ հայտնի չէ բանաստեղծի սկզբունքայնությունը, նրա անզիջող
պայքարը իր տեսակետների համար: Հակառակ մտածելը պարզապես զրպար-
տություն է:

Փորձեր են արվում անհիմն կերպով վատաբանելու «Հանդեսի» խմբա-
գրին և խմբագրական կոլեգիայի մի շարք անդամներին, թույլ են տրված
մարդու և քաղաքացու պատիվն ու արժանապատվությունը վիրավորող ստե-
ր ու բամբասանքներ, չնայած շատերին հայտնի է, որ «Հանդեսի» խմբագրի ու
ու բանաստեղծի հարաբերությունները միշտ եղել են բարեկամական: Հիշենք
միայն մի քանի փաստեր: 1965 թ. ԳԱ փոխնախագահ Մ. Ներսիսյանի հրա-
վերով Պ. Սևակը զեկուցում կարդաց Ակադեմիայի լեկտորիումում հայ միջ-
նադարյան գրականության մասին: Մեկ տարի հետո «Պատմա-բանասիրա-
կան հանդեսում» (խմբագիր Մ. Ներսիսյան) հրապարակվեց բանաստեղծի
«Ծ՛րբ է ծնվել Սայաթ-Նովան» ընդարձակ հոդվածը: 1973 և 1974 թթ. նույն
հանդեսում Պ. Սևակի մասին լույս տեսան երկու հոդված, որոնցում ամենա-
ջերմ խոսքերն են ասված մեծ բանաստեղծի մասին:

Սակայն ինչ՞ով բացատրել «Զրույցի» հեղինակի անսքող սուբյեկտիվու-
թյունը: Մեղ հայտնի է հետևյալը: «Հանդեսի» խմբագիրը, դժգոհ լինելով
Արհեստակեսյանի աշխատանքից, առաջարկեց նրան անցնել այլ աշխատան-
քի, որը և իրականացավ ի դեպ հենց խմբագրի օգնությամբ: Սակայն վիրա-
վորված ինքնասիրությունը, այնուամենայնիվ, ինչպես տեսնում ենք անհետե-
վանք չի անցել:

Հարկ է նկատել, որ «Զրույցում» ինքնառեկամ կա նաև Պ. Սևակի հաշվին: Այսպես, բազմիցս խոսվում է այն մասին, որ բանաստեղծի մի շարք հոդվածների և հրապարակային ելույթների գաղափարներն իբր իրեն՝ Ա. Արիստակեսյանին են պատկանում: Այսպես, օրինակ, նա հայտնում է, որ իր դրոգումով է, որ Սևակը ելույթ ունեցավ Հայաստանի գրողների միության 5-րդ համագումարում: Ավելին: Իբր Արիստակեսյանն է հուշել բանաստեղծին նաև այն, թե ինչ հարցերի մասին նա պիտի խոսի այնտեղ: Որպեսզի հաստատի իր այդ թեզը, «Զրույցի» հեղինակը գրում է, թե Սևակը մի անգամ դիմելով իրեն, ասել է. «Այս տարվա համար շատ չեղան պատվերներդ»: Ուրեմն ինչ՝ պատվիրատու և պատվերներ կատարող: Մի՞թե սա վիրավորանք չէ մեծ բանաստեղծի հասցեին:

Արիստակեսյանը չի հրապարակել իր այդ «գրառումները», որոնցում չի շոշափվում ոչ մի լուրջ հարց: Զարմանալի է, թե ինչու է այդ անում այսօր Երևանի ռադիոն նրա մահվանից հետո: Գոնե նախօրոք ստուգվեին փաստերը: Մենք համոզված ենք, որ բանիմաց և անաչառ մարդիկ չէին կազմակերպի նման ցածրորակ ու միտումնավոր «Զրույցի» հաղորդումը:

Պատմության կեղծարար, նացիոնալիստ Զիա Բունիաթովն առաջին անգամ (1967 թ.) միանգամայն հիմնավորապես մերկացվել է «Պատմա-բանասիրական հանդեսում»: Ինչու՞ վարկաբեկել 22 տարի առաջ կատարված այդ շնորհակալ գործը: Ինչու՞ այս օրերին, երբ հայ ժողովրդին հուզում են շատ կարևոր, բախտորոշ հարցեր, Երևանի ռադիոյի ղեկավարությունը հարկ է համարել մեր հասարակայնությանը զբաղեցնել արտառոց ստերով ու բամբասանքներով:

ՀնՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Առաքելյան Բ., Երեմյան Ս.
Ներսիսյան Մ., Նույն ակադեմիայի թղթակից անդամ
Նալբանդյան Վ., գիտության թեկնածուներ Համա-
գասայան Վ., Ոսկանյան Ա., Պիվազյան է.